

մահուան իւրոյ, ընդ աշխարհական ձեւոյն եւ նշանի՝ փոխեալ եւ զանուն իւր պանծալի եւ զտոհմային՝ ՚ի ծերացեալն անուն **Հեղի**, ոչ գիտեմ որպիսի՝ խորհրդով ընտրեալ: Ոչ յիշի եթէ էառ եւ զօծումն քահանայութեան, եւ զբարձրագոյնն եւս, այլ հաւանական թուի. ՚ի միում ՚ի թղթոցն՝ Քահանայապետն Իննովկենտ՝ առ որ դեսպանութեամբ եկեալ էր Հեթում-Հեղի՝ յամի 1210-1, անուանէ զնա Աբբայ Ս. Աստուածածնի Դրագարկի (Abbas S. Mariæ Trium-Arcium). զի թէպէտ եւ սիրէր նա համակ զառանձնանալն, այլ Լեւոն քաջ գիտակ նորայն հմտութեան լեզուաց եւ ուսմանց, եւ մանաւանդ խոհականութեանն, որպէս զայլս ՚ի հանճարեղից եպիսկոպոսաց եւ պարոնայց՝ խառնէր եւ զնա ՚ի կարեւոր պէտս եւ տեսչութիւնս թագաւորութեան իւրոյ. եւ յոյժ առաւել օժանդակեցաւ ՚ի սմանէ ՚ի կրօնաւորութեանն, քան յայլոց՝ յաշխարհական իշխանութեան. որպէս յայնմ դժուարին դեսպանութեան, մինչ անտիոքեան ինդրոյն խէթ կայր ՚ի միտս Քահանայապետին, եւ յայլում ծանր դիպուածի՝ յորում խէթ ընդ թագաւորն էր եւ ընդ կաթողիկոսն Հայոց Յովհաննէս. առ որ եւ առաջնորդէ այժմիկ կարգ բանիս պատմութեան:

Բ. Յովհաննէս Է կաթողիկոս Մեծաբարոյ

Քանզի ծերունի հայրապետն Գրիգոր՝ որ ազատեաց, թերեւս եւ օրհնեաց զբեռորդին իւր Հեթում ՚ի կարգ կրօնաւորութեան եւ արեղայութեան, ծանրացեալ տիովք, զաւետարանական ծերունւոյն երկրորդեաց զարձակուրդ կենաց՝ ՚ի դէպ ժամու խաղաղութեանն. եւ անդէն մինչ առ թագաւորին կայր՝ եհաս նմա վախճան, յետ իննամեայ աթոռակալութեանն, ՚ի սկիզբն ամսեան մարտի (Դ աւուր) 1203 տարւոյ, եւ թաղեցաւ ՚ի մեծափառ վանս Արքակաղնին. յինքն դադարեցաւ քահանայապետական տոհմն Պահլաւունեաց, որ յընթացս ամաց իւր հարիւր եւ քառասնից (1065-1203) ընծայեաց զհնգեսին Գրիգորս (Բ-Զ), եւ զգերագանցեալն զամենեքումք զՆերսէս Շնորհալի: Երեցուն յետնոց կաթողիկոսացն ժամանակակից եւ գործակից եղեւ Լեւոն, յորոց երկուցն՝ ինքնին իսկ հաւանող եւ հաստատող ընտրութեան, որպէս եւ մերժման միոյն (Քարավիժին): Հաճութեամբ եւ հրաւիրմամբ իւրով (եթէ ոչ եւ դրդմամբ) ընտրեցաւ յաջորդ Պահլաւունեացոյ՝ ՚ի զարմէ Հեթմեանց՝ որդին Կոստանդեայ՝ հօրեղբօր Հեթմոյ-Հեղեայ եւ Ս. Ներսիսի, **Յովհաննէս Է Կաթողիկոս**. ըստ ազնուութեան տոհմին եւ բարուքն հաւասարեալ, եւ մեծանձնութեամբ